

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Երևանի պետական համալսարանը հույժ կարևոր դեր է խաղացել և խաղում հայոց մշակույթի ու գիտության զարգացման ու ազգային մտավորականության պատրաստման գործում: Մեծ է համալսարանի դերն ու նշանակությունը ընդհանրապես հայ կյանքի, իսկ համար. այն մեր ժողովրդի քաղաքակրթության չափանիշն է: Այս առումով կարևոր է համալսարանի հիմնադրման պատմության ծջմարտացի վերարտադրումը, գնահատումն այն մարդկանց, որոնք կանգնած են եղել համասարանի ստեղծման ակունքներում: Հայտնի է, որ մինչև վերջերս հայ պատմագիտության մեջ անբաժանելիորեն իշխում էր այն տեսակետը, թե իբր Երևանի պետական համալսարանը հիմնադրվել է 1920 թ. դեկտեմբերին՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո: Նման պնդման հեղինակները միտումնավոր խեղաթյուրելով պատմական խոսույն փաստերը՝ ժխտում էին այն հայտնի իրողությունը, որ համալսարանը հիմնադրվել էր ավելի վաղ, որ այն կար, գոյություն ուներ, գործում էր 1919 թ. մայիսից: Յոթ տասնամյակ շարունակ ժխտվել է, անտեսվել, մոռացության է մատնվել Հայաստանի համալսարանն իր ամբողջ համակարգով, այն ամենով, ինչը համալսարանը դարձնում է համալսարան (ուսանողություն, դասախոսական և ուսումնա-օժանդակ անձնակազմ, ուսումնառություն, ամբիոններ և այլն, և այլն) ժխտվել է միայն այն պատճառով, որ այն հիմնադրվել էր (1919 թ. մայիսի 16-ին)՝ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության օրոք, և որ նրա հիմնադրումը սղերսվում էր այնպիսի անունների հետ, ինչպիսիք են Ն. Աղբալյանը, Ա. Տիգրանյանը, Պ. Զավրյանը, Ա. Խատիսյանը և այլոք:

Այսօր, երբ լայնորեն շրջվում են մեր անցյալի պատմության շատ խեղաթյուրումների ու «խմբագրումների», երբ վերականգնվում են ոտնահարված սրբությունները, և ժողովուրդը տեր է դառնում իր ծջմարտի հիշողությանը, վերականգնվում է նաև համալսարանի հիմնադրման իրական պատմությունը: Ժամանակն է եկել իրերը կոչել իրենց անուններով:

Մերժելով Երևանի համալսարանի հիմնադրման վերաբերյալ այսօր պաշտոնական շրջանառության մեջ գտնվող թվականը (1920 թ. դեկտեմբերի 17) և վերականգնելով հիմնադրման իրական թվականը (1919 թ. մայիսի 16)¹, մենք անուն առ անուն երախտագիտությամբ ենք հիշում բոլոր նրանց, որոնց տընաջան, ազգանվեր աշխատանքի շնորհիվ հնարավոր դարձավ հիմնադրել հայոց մեծագույն կրթական հաստատությունը: Հատկապես գնահատելի են Հայաստանի Հանրապետության Հանրալիև կրթության և Արվեստի նախարարներ Գ. Մելիք-Ղարաբաղյանի, Ն. Աբալյանի և Գ. Ղազարյանի, Հայաստանի համալսարանի առաջին ռեկտոր, նշանավոր իրավաբան, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Պետրոգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Յու. Ա. Ղամբարյանի (1850—1926) և այլոց ջանքերը, որոնց անմիջական մասնակցության շնորհիվ է, որ հնարավոր եղավ հիմնադրել Հայաստանի «դեմոկրատիկ համալսարանը»²:

Ահա այս նկատարումով ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Հայաստանի համալսարանի պատմության վերաբերող ներքոբերված փաստաթղթերը: Նշենք, որ դրանք բոլորն էլ անմիջականորեն լինելով պատմա-լեզվաբանական ֆակուլտետին առնչվող վավերագրեր, միաժամանակ լավագույնս պատկերացում են տալիս նաև համալսարանի առօրյալի, հոգսերի, դժվարությունների և խնդիրների մասին: Փաստաթղթերից ակներև է դառնում, թե ովքեր են անմիջականորեն մասնակցել համալսարանի ստեղծմանը, ինչ հարցեր են դրված եղել նրանց առջև, որքանով են նրանք կարողացել լուծել ծառայած խնդիրները:

Երբ մանրամասն ծանոթանում ենք Հայաստանի համալսարանի պատմությանը, ապա ա-

¹ Այդ մասին տե՛ս Լ. Ա. Նուրջուդյան, Պ. Հ. Հովհաննիսյան, Ո՞ր ժամանակությունից չենք հրաժարվում (ինչպես է հիմնադրվել համալսարանը), «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, 16 մայիսի 1989 թ.:

² Տե՛ս «Մշակ» օրաթերթ, 1920, № 2:

ոաջին հետևությունը, որին հանգում ենք, այն է, որ հետազայի էրվանի ժողովրդական և ապա պետական համալսարանը ոչ միայն ինչ-որ առանձին նորաստեղծ ուսումնական իաստատություն չէ, այլ անմիջական շարունակությունն է Հայաստանի համալսարանի, երբեք էլ չընդհատված և բնական շարունակությունը: Նույնն են մնացել դասախոսական և ռաւանդական անձնակազմերը, նույնը առարկաներն ու ծրագրերը (մեկ-երկու բացառությամբ), նախատկն ու խնդիրները, անգամ շենքը, սարքավորումները և այլն: Եվ այս իրողությունն է փաստել նաև Խորհրդային Հայաստանի նորաստեղծ կառավարությունն իր հատուկ դեկրետով, որի համաձայն Հայաստանի համալսարանը «վերակազմվում էր և վերակազմվում էր նաև ժողովրդական համալսարան»³:

Ներքերբրված փաստաթղթերը վերաբերում են Հայաստանի համալսարանի գործունեության երրորդ շրջանին (1920 թ. հունիս-դեկտեմբեր): Չնայած բոլոր փաստաթղթերն էլ խիստ հետաքրքրական են, սակայն մեր կարծիքով առանձնահատուկ է հատկապես №1-ը, որը պատմալեզվաբանական ֆակուլտետի 1920 թ. ամառային գործունեության մանրամասն վերլուծությունն է: Սույն զեկուցաչիրը, որը կազմել է ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Հակոբ Մանանդյանը, լավագույնս ապացուցում է այն իրողությունը, որ Հայաստանի համալսարանը, չնայած բազմաթիվ ու բազմապիսի դժվարություններին, գոյություն ուներ, գործում էր և փորձում էր դառնալ ազգային մշակույթի ու հոգևոր կյանքի կազմակերպման կենտրոն: Հրապարակվող փաստաթղթերը Ոոր լույս են սփռում նաև Հ. Մանանդյանի կենսագրության առայսօր մութ մնացած որոշ կողմերի վրա: Մեր առջև հանում է Հայաստանում համալսարանական գործի անխոնջ կազմակերպիչներից մեկի, Հայաստանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար (11 հունիսի 1920 թ.—17 դեկտեմբերի 1920 թ.), հետագայում համալսարանի ռեկտոր (7 հունվարի 1921 թ.—19 հոկտեմբերի 1921 թ.), արևելաչիտական (պատմագրական) ֆակուլտետի դեկան, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ (1921—1925) Հակոբ Համազասպի Մանանդյանի (1873—1952) վեհ կերպարը, որի ամբողջ կյանքը անմասցորդ նվիրաբերում էր հարազատ ժողովրդին ու հայոց համալսարանին:

Հրապարակվող փաստաթղթերի բնագրերը պահվում են Մաշտոցի անվան մատենադարանի արխիվային բաժնում՝ Հ. Հ. Մանանդյանի ֆոնդում: Փաստաթղթերը հրատարակում ենք նույնությամբ, որոշ դեպքերում կանոնավորել ենք միայն կետադրությունը: Հավելումները առնրված են < > փակագծերի մեջ:

Պ. Է. ԸՆԿՎԱՆՆԻՍՅԱՆ

№ 1 ԶԵԿՈՒՅՈՒՄ

1920 ԹՎԻ ԱՄԱՌՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲ < ԱՆԱԿԱՆ > ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Համաձայն հունիսի 11-ի 1920 թ. ֆակուլտետի ժողովի արձանագրական որոշման ես հանձն էի առել վարել ֆակուլտետի ուսումնական ընթացիկ գործերը Ալեքսանդրապոլում, առանց տնտեսական ու կազմակերպչական պարտավորությունների: Այնուհետև հունիսի 22-ի գրությամբ համալսարանի ռեկտոր պրոֆեսոր < Ռֆեսոր > Ղամբարյանը հանձնարարել էր ինձ ի կատար ածել ամառվա ընթացքում ֆակուլտետի հետևյալ որոշումները. 1) Բանակցությունների մեջ մտնել, համաձայն ֆակուլտետի 9 հունիսի որոշման, այն անձնավորությունների հետ, որոնք հրավիրվելու են իբրև դասախոս առաջիկա կիսամյակում: Հրավիրվելիք անձնավորություններն էին Ն. Աղբալյան¹, Հր. Աճառյան², Պատրուբանյան³, Անդրեաս⁴, Տր. Մուրադ⁵, Աշոտ Հովհաննիսյան⁶, պրոֆ. Մսերյան⁷, պրոֆ. Ադոնց⁸ և Հ. Օրբելի⁹: Ի կատարումն այդ հանձնարարության ուղարկված է հրավեր պարոն Աճառյանին (գրութ < յուն > № 137) և № 138, № 140 գրությամբ դիմում է արված Հայաստանի Հանրապետության դիպլոմատիկական ներկայացուցչին Գերմանիայում¹⁰ և Հայր Մսերոպ վար-

³ «ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջմառին, 1921, էջ 17—

դպակետ նշանյանին¹¹ Երուսաղեմում, որ հաղորդեն ֆակուլտետիս պրոֆ. Պատրուբանյանի, Անդրեասի և Ֆր. Մուրադի հասցեները: Աշ. Հովհաննիսյանին և Նիկ. Աղբալյանին դիմում է արված բերանացի կերպով, իսկ պրոֆ. Մսերյանի, պրոֆ. Ադոնցի և Հ. Օրբելու հետ անհնարին էր բանակցություններ վարել, որովհետև նրանք գտնվում էին Մոսկվայում և Ֆինլանդիայում: 2) Համաձայն ռեկտորի առաջարկի՝ հանձնարարված էր ինձ նաև միջոցներ ձեռք առնել և գտնել համապատասխան թեկնածուներ հունա-հոմեական գրքականության պատմության, բյուզանդագիտության, պարսկերենի և վրացերենի: ամբիոնների համար: Պարոն ռեկտորը միաժամանակ խնդրել էր, որ այդ ուղղությամբ կատարելիք աշխատանքի հետևանքի, ինչպես և ձեռք առած միջոցների մասին, հայտնեմ իրեն: Ի պատասխան այդ կարգադրության, 29 հունիսի № 117 գրությամբ ես հայտնեցի ռեկտորին, որ թեկնածուներ պետք է որոնել Բաքվում կամ Թիֆլիսում և, որ այդ ինձ համար շատ դժվար է, որովհետև այդ նպատակի համար անհրաժեշտ կլինեն գալ ինձ Թիֆլիս, մինչդեռ ես ամառվա ընթացքում պարտավոր եմ մնալ Ալեքսանդրապոլում: Հայտնելով այդ մասին, խնդրել էի պարոն ռեկտորին, որ այդ հանձնարարությունը, ըստ իր բարիհայեցողության, տա ֆակուլտետիս մի ուրիշ անդամի, որ գտնվում է Թիֆլիսում, ուր թերևս հնարավոր լինի գտնել համապատասխան թեկնածուներ վերոհիշյալ ամբիոնների համար: Պարոն ռեկտորը հուլիսի 2-ի գրությամբ հայտնել է ինձ, որ ստացել է իմ № 117 գրությունը և թեկնածուներ հրավիրելու խնդրի խորհրդակցության նյութ է դարձնելու Թիֆլիսում ֆակուլտետիս անդամների նիստում:

3) Երրորդ հանձնարարությունն էր պարոն ռեկտորի՝ ուսանողների ընդունելության մասին անել համապատասխան կարգադրություն: 16 հուլիսի № 141 գրությամբ հայտնել էի Հանրային կրթության նախարարության և № 152 գրությամբ պարոն ռեկտորին, որ անկարելի է ի կատար ածել ֆակուլտետի որոշումն ուսանողների ընդունելության մասին մինչև համալսարանի տեղափոխման խնդրի վերջնական կարգավորումը: Այդ խնդիրը ևս վերջնականապես կարգավորված է այժմ Երևանում:

4) Զորրորդ հանձնարարությունն էր պարոն ռեկտորի՝ ի կատար ածել ֆակուլտետի որոշումը արտասահմանում գրքերի գնման գործը կազմակերպելու <և> նվերներ ստանալու մասին: Այդ հանձնարարությունը, որ խիստ մեծ կարևորություն ունի ֆակուլտետիս գիտական բարգավաճման համար, ի կատար է ածված հուլիս ամսի սկզբին: Հուլիսի 7-ի № 138 գրությամբ դիմել եմ Հանրային կրթության մինիստրին¹² և խնդրել, որ մինիստրությունը միջնորդե Արտաքին գործոց նախարարության առաջ, որ վերջինս մեր դիմումները № № 124, 125, 126, 127, 128, 129, 130 և 131 անհապաղ ուղարկե Հայաստանի Հանրապետության դիպլոմատիական ներկայացուցիչներին Ամբրիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Կ. Պոլսում, Գերմանիայում, Ավստրիայում և Պարսկաստանում և հրահանգե իր կողմից ի կատար ածելու ֆակուլտետիս խնդիրները գրքերի գնման ու նվերներ ստանալու մասին: Դիպլոմատիական ներկայացուցիչներին հատուկ գրություններ են ուղարկված, որ նրանք ըստ իրենց բարեհայեցողության հրավիրեն ձեռնահաս ուժեր և կազմակերպեն համալսարանիս համար կամավոր նվիրատվությունների հանգանակում և ձեռք բերեն համալսարանի գրադարանի համար գրքեր, թե՛ գիտական հիմնարկություններից և թե՛ մասնավոր անձերից, որոնք բարի կլինեն իրանց կամավոր նվերներով օժանդակ լինելու համալսարանիս բարգավաճման մեծ գործին: Հավաքված գրքերը խնդրել եմ առանց հապաղման մաս մաս ուղարկել համալսարանիս՝ Հայաստան: Այդ դիմումները, ինչպես ինձ հայտնել են, արդեն ուղարկված են դիպլոմատիական ներկայացու-

շիշներին և կարելի է հուսալ, որ հետզհետե կրստացվին արտասահմանից գրքեր:

5) Ի կատար ածելով ֆակուլտետի վերաբերյալ այլ ընթացիկ գործերը, ամառվա ընթացքում կարգի եմ բերել ֆակուլտետի գրասենյակային նախկին գործերը, որ գտնվում էին ավելի քան անբավարար վիճակում: Կազմված է այժմ ամեն մի ուսանողի համար առանձին գործ և բոլոր գրագրությունները ներմուծված են մտից և ելից մատյանները, իսկ գրագրությունների վրա նշանակված են մատյանների համարները:

6) Վեցերորդ հանձնարարությունն էր՝ վճարել ճանապարհածխս և օրապահիկ Ե. Տեր-Մինասյանին¹³ և Ռ. Աբրահամյանին¹⁴, որին ռեկտորը հրավիրած է եղել Երևան վարելու ֆակուլտետի և ռեկտորի քարտուղարի գործերը: Պարոն Եր. Տեր-Մինասյանին ճանապարհածախսը և օրապահիկը վրձարված է, որովհետև նա Երևան էր ուղարկված ֆակուլտետի որոշման համաձայն (արձև <անագրություն> ԻԴ), իսկ պարոն Ռ. Աբրահամյանին ճանապարհածախս և օրապահիկ չէ վճարված, որովհետև նրան Երևան ուղարկելու մասին ֆակուլտետի արձանագրական որոշում չկա, բացի այդ դժվար էր որոշել, թե արդյոք նրան հասանելիք գումարը ո՞ր կրեդիտից է վճարվելու՝ ֆակուլտետի տրամադրության տակ գտնվող գումարներից, թե ռեկտորի:

7) Պարոն ռեկտորը հունիսի 22-ին ուղարկել էր ինձ Ե. Ֆրանգյանի¹⁵, Կ. Բասմաշյանի¹⁶ և Նիկկելսի¹⁷ խնդրագրերը համապատասխան փաստաթղթերով և խնդրել քննության առնել այդ խնդրագրերը ֆակուլտետի նիստում, ինչպես նաև Մ. Խոստիկանի վաղուց ներկայացրած խնդրագիրը¹⁸ և հետևանքի մասին հայտնել իրեն: Ամառվա ընթացքում այդ հանձնարարությունը, բնականաբար, անկարելի էր ի կատար ածել և այժմ, երբ ֆակուլտետն արդեն հավաքվել է, առաջիկա նիստերից մեկում այդ խնդիրը կդրվի քննության:

Պարոն ռեկտորը հունիսի 22-ի գրությամբ հաղորդել էր ինձ նաև ի գիտություն, որ ինքը հրավիրել է պատմա-լեզվաբանական ֆակուլտետի համար պրիվատ դոցենտի պաշտոնով Գ. Ղափանցյանին¹⁹ և ուսուցչի պաշտոնով Աշոտ Գասպարյանին²⁰: Հուլիսի 2-ին պարոն ռեկտորը կարգադրել էր ծառայության հրավիրել գործավարի օգնականի պաշտոնով Թիֆլիսի պոլիտեխնիկումի տնտեսագիտական բաժնի ուսանող Տիգրան Գալստյանին, որը և հրավիրվեց անմիջապես պաշտոնի: Սակայն մի քանի օր շանցած, նրան բանտարկեցին, իբրև մեծամասնականի: Համաձայն պարոն ռեկտորի հեռագրական կարգադրության, հուլիսի 21-ին № 146 գրությամբ դիմեցի Շիրակի շրջանի նահանգապետին²¹ և կցելով պարոն ռեկտորի երաշխավորության հեռագիրը, խնդրեցի, որ պարոն Տ. Գալստյանը ազատ արձակվի և մնա իր ստանձնած պաշտոնում, սակայն այդ դիմումը մնաց անհետևանք և պարոն Տ. Գալստյանը, ըստ երևույթի, մինչև այժմ գտնվում է բանտում:

Ամառվա ընթացքում ստացված են, իբրև նվեր, համալսարանի գրադարանի համար 39 կտոր գիրք պարոն Մարտին Հակովբյանից, նաև պարոն Հայկ Գր. Ռաֆայելյանից 86 կտոր գիրք, այն է՝ «Энциклопедический словарь, Ф. А. Брокгауза и И. А. Эфрона, т. 1—86»: Այդ նվիրատվությունների համար հայտնված է շնորհակալություն և գրքերն այժմ տեղափոխված են Երևան:

Բացի այդ, հատուկ ցուցակով, ստացված են Ալիքսանդրապոլում նախկին 153-րդ Բաքինսկի պոլիի գրադարանի երկրորդ, չորրորդ, վեցերորդ և իններորդ բաժինները, և այդ գրքերը ես բերված են այժմ Երևան:

Ի նկատի առնելով, որ ֆակուլտետի ժողովում ցանկություն էր հայտնված՝ հավաքել առաջին հերթին Հայաստանում մասնավոր մարդկանց մոտ գտնվող և համալսարանի գրադարանի համար պիտանի գրքերը, Ալիքսանդ-

րապուլում հիսուն հազար ուրուլու գնել եմ, համաձայնութեամբ Ալեքսանդրապուլում գտնվող ֆակուլտետի անդամներ Ս. Տիգրանյանի²², Երվանդ Տեր-Մինասյանի և Թ. Աբրահամյանի, ֆակուլտետիս ղեկնապետ Արամ Բաբայանից մոտ 150 գիրք, որոնց գնահատութիւնը կատարել ենք և գրքերը, ևս ցուցակագրել միասին: Այդ գրքերը, որ խիստ արժեքավոր և կարևոր են ֆակուլտետիս գրադարանի համար, նույնպես բերված են այժմ Երևան:

Ամառվա ընթացքում ֆակուլտետի Ալեքսանդրապուլում գտնվող ծառայողներն էին՝ ղեկնապետ Արմենակ Բաբայանը և ծառաներ Մկրտիչ Ալեքսանյանը և Հարութիւն Գալստյանը: Ծառայողներից Մկրտիչ Ալեքսանյանը պաշտոն է վարել մինչև սեպտեմբերի սկիզբը, իսկ պարոն Արամ Բաբայանը և Հարութիւն Գալստյանը մինչև հոկտեմբերի սկիզբը: Այդ ծառայողները մնացել են Ալեքսանդրապուլում և ստանձնել այնտեղ պետական ուրիշ պաշտոններ: Անհրաժեշտ է այժմ որոշել, թե արդյոք պետք է նրանց վճարել լրացուցիչ վարձատրութիւն բացի ուճիկից:

Շնորհիվ ներկա աշնանային կիսամյակի անկանոն ընթացքի, ես, որպես ղեկանի պաշտոնակատար, ստիպված էի պաշտոնավարել մինչև այժմ, թեև ընտրված էի ամառվա ամիսների համար և հույս ունեի սեպտեմբերի սկզբին հանձնելու բոլոր գործերը նշանակված ղեկանին: Հոկտեմբերի 15-ին, երբ ֆակուլտետը դեռ նոր էր տեղափոխվել Երևան, ես պարտք համարեցի հեռագիր տալ ղեկան Մեսրոպ Ծպիսկոպոսին²³, հայտնելով նրան, որ ֆակուլտետը Երևանումն է և երեքշաբթի ժամը 5-ին ժողով է և խնդրեցի նրան գալ ժողովին և ընդունել ինձանից գործերը: Սակայն ղեկանի բացակայութեան պատճառով ստիպված եմ շարունակել ֆակուլտետի կողմից ինձ հանձնարարված պաշտոնը:

Արդ՝ խնդրում եմ ֆակուլտետի հարգելի ժողովից ընտրել ղեկան և քարտուղար, ընդունել ինձանից ֆակուլտետի գործերը, նաև ստուգել ու ընդունել ինձանից իմ պաշտոնավարութեան ընթացքում կատարված ծախսերի հաշիվները և ծախսված գումարների բոլոր փաստաթղթերը²⁴:

Դեկանի պաշտոնակատար՝ Հ. Մանանդյան

Հոկտեմբերի 17-ին, 1920 թ.

Երևան

Վավ. № 92ժա, թ. 14—15: Բնագիր:

1. Ն. Պ. Աղթալյան (1873—1947) — նշանավոր գրականագետ, մանկավարժ, պետական գործիչ: Սովորել է Մոսկվայի, Լոզանի և Սորբոնի համալսարաններում: Եղել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, Հակոբյան կրթության և Արվեստի մինիստր:

2. Հր. Հ. Աճառյան (1876—1953) — ակադեմիկոս լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Սովորել է Սորբոնի և Ատրաքսբուրգի համալսարաններում: Երևանի համալսարանում աշխատանքի է անցել միայն 1923 թվականին:

3. Պ. Պատրուբանյան (Բաղդուպանյան, 1861—1924) — հունգարահայ լեզվաբան, բանասեր, խմբագիր: Ավարտել է Բուդապեշտի համալսարանը: Հետագայում նույն համալսարանի Արևելյան բաժնի պրոֆեսոր:

4. Անդրեաս — Ինքնությունը մեզ չհաջողվեց պարզել:

5. Տր. Մուրադ — հայագետ, Խեղինակն է “Ararat und Massis. Studien zur armenischen Altertumskunde und Literatur, Heidelberg. 1901” մենագրության:

6. Ա. Գ. Հովհաննիսյան (1887—1972) — խորհրդահայ ակադեմիկոս պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, պետական և կուսակցական գործիչ: Սովորել է Ենայի, Հայի և Մյունխենի համալսարաններում: Եղել է Խորհրդային Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը (1922—1927):

7. **Լ. Ջ. Մսերյան (1867—1933)** — լեզվաբան, հնագետ: Ավարտել է Լազարյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Լազարյան ճեմարանի և Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, Վարշավայի համալսարանի համեմատական քերականության ամբիոնի վարիչ:

8. **Ն. Գ. Աղոնց (1875—1942)** — պատմաբան, բանասեր, բյուզանդագետ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմաբանասիրական ֆակուլտետները: Եղել է Լազարյան ճեմարանի, Պետերբուրգի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Բրյուսելի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ:

9. **Հ. Ա. Օրբելի (1887—1961)** — արևելագետ, հնագետ, ՆՍՄՀ ԳԱ ակադեմիկոս: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, եղել է Նույն համալսարանի պրոֆեսոր: Հետագայում ՀՍՄՀ ԳԱ առաջին պրեզիդենտ:

10. Այդ ժամանակ Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանն էր Ջեյմս Գրինֆիլդը (տե՛ս R. Hovannisian, The Republic of Armenia, v. II, p. 526):

11. **Մ. Նշանյան (— 1944)** — Նշանավոր ձեռագրագետ ու աղբյուրագետ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության անդամ, հետագայում Երուսաղեմի Հայոց պատրիարք (1939—1944):

Հ. Մանսդյանի արիֆվում պահպանվել է Մ. Նշանյանի պատասխան գրությունը առ Հայաստանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի դեկանին՝ «Այսօր ստանալով Ձեր 15 հուլիսի 1920 թ. № 140 գրությունը, կը փութամ հայտնել, թե հայագետ Ֆր. Մուրադի հասցեն է հետևյալը՝ Frederic Marad, Iaffa (Palestine):

Որպեսզի Ֆր. Մուրադ Ձեր հրավերի մասին կանխավ տեղեկություն ունենա հարկ համարեցի հաղորդել իրեն Ձեր նամակի պարունակությունը:

Հարգանքով

Մտերու պարզապետ Նշանյան» (տե՛ս թղթ. 227, վավ. 340, թ. 1):

12. Նշված իրադարձությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության Հանրային կրթության և Արվեստի մինիստրը Գ. Ղազարյանն էր:

13. **Ե. Գ. Տեր-Մինասյան (1879—1974)** — բանասեր, պատմաբան: Սովորել է Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում, եղել է Երևանի պետական համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչ:

14. **Ռ. Թ. Աբրահամյան (1881—1951)** — լեզվաբան, իրանագետ: Սովորել է Կիևի, Լայպցիգի և Պետերբուրգի համալսարաններում: Հետագայում Թեհրանի համալսարանի հին պարսկերենի և պահլավերենի ամբիոնի վարիչ:

15. Փիլիսոփայության դոկտոր Ե. Ֆրանգլանն ավարտել է Բեռլինի համալսարանը: Հեղինակն է «Նիցցեի փիլիսոփայությունը» (1910), «Միխայլովսկին որպես սոցիոլոգ-փիլիսոփա» (1911), «Քննադատական փիլիսոփայություն» և այլ փիլիսոփայական երկասիրությունների:

16. **Կ. Հ. Բասմաջյան (1864—1942)** — պատմաբան, բառարանագիր, խմբագիր: Ավարտել է Սորբոնի համալսարանը: Հեղինակն է «Լևոն Ե Լուսինյան» (1908), «Առձեռն բառարան հայերեն աշխարհիկ լեզվե ֆրանսերեն» (1915) և այլ երկերի:

17. Պատական բանասիրության թեկնածու Ե. Նիկկելսը ավարտել է Խարկովի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Նա երկար տարիներ Երևանի արական և Հոփսիմյանց օրիորդաց գիմնազիաներում աշխատել է որպես հին հունարենի և լատիներենի ուսուցիչ:

18. Առկա փաստաթղթերից ակներև է, որ փիլիսոփայության դոկտոր Մ. Ռոստկյանը համալսարանի վարչությանն էր դիմել դեռևս 1920 թ. հունվարին (տե՛ս թղթ. 222, վավ. № 93ժգ, թ. 17):

19. **Գ. Ա. Ղափանցյան (1887—1957)** — լեզվաբան, ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելագիտական ֆակուլտետը, եղել է Երևանի պետական համալսարանի լեզվաբանության ամբիոնի վարիչ:

20. Հանրային կրթության և Արվեստի մինիստրության 1920 թ. օգոստոսի 1-ի հրամանագրով Ա. Գասպարյանը նշանակվել է ընդհանուր պատմության դասախոս, այլ փաստաթղթից հայտնի է նաև, որ 1920 թ. տարեշրջանում նա կարդալու էր և Ֆրանսիական մեծ հեղափոխության պատմությունը:

21. Այդ ժամանակ (1920 թ. մայիսից) Շիրակի նահանգապետն էր Կարո Սասունին (1880—1977):

22. **Ս. Թ. Տիգրանյան (1875—1947)** — իրավաբան, հոգեբան, մանկավարժ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Եղել է Երևանի պետական համալսարանի հասարակագիտական ֆակուլտետի դեկան:

23. **Մտերու Եպիսկոպոս (Մ. Տեր-Մովսիսյան, 1864—1939)** — Նշանավոր ձեռագրա-

գետ, բանասեր, մանկավարժ, եկեղեցական գործիչ: Հայաստանի համալսարանի հիմնադիրներից, պատմա-լեզվաբանական ֆակուլտետի դեկան:

24. Չնայած Հ. Մանանդյանի բազմիցս կրկնվող հրաժարականներին, նա պաշտոնավորվեց մինչև Հայաստանի համալսարանի վերակազմվելը (1920 թ. դեկտեմբերի 17):

№ 2
<ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ Ն: 1 >

1920 թ. հոկտեմբերի 18-ին, երեկոյան ժամի 5¹/₂-ից համալսարանի շենքում:

Նախագահ՝ դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյան:

Արձանագրող՝ ժողովի անդամ Մ. Աբեղյան¹:

Ներկա անդամներ՝ Ս. Տիգրանյան, Ռ. Աբրահամյան, Ա. Գասպարյան, Ե. Տեր-Մինասյան, Ա. Լոռու-Մելիք Քալանթար², Գ. Ղափանցյան և Ե. Ֆրանգյան:

1. Նախագահը բանալով պատմա-բանասիրական ֆակուլտետի ժողովի առաջին նիստը՝ առաջարկեց ընտրել ժողովի համար քարտուղար: Որոշվեց, որ ժողովի անդամները հերթով, ազգանունների այբբենական կարգով, արձանագրություն կազմեն՝ վարձատրություն ստանալով բացակա քարտուղարի ոտճիկից, մինչև որ քարտուղարը գա, և նոր մշտական քարտուղարի ընտրություն արվի: Միաժամանակ որոշվեց, որ նկատի ունենալով քարտուղարի ոտճիկի (ամսական 1500 ու.) անբավարարությունն ու անհամապատասխանությունը նրա կատարած աշխատանքին, մշտական քարտուղարի ընտրության ժամանակ խորհրդակցություն լինի քարտուղարի վարձատրության մասին:

2. Դեկանի պաշտոնակատար < Մանանդյանը զեկուցեց, թե ինքն ինչ է արել ամառվա արձակուրդի ընթացքում: Նրա զեկուցագիրը կցվում է սույն արձանագրությանը³:

3. Որոշվեց հայտնեց Հանրային կրթության և Արվեստի մինիստրությանը, որ համալսարանի ուսկուղիի գրության հիման վրա ֆակուլտետիս համար հրավիրված են պրիվատ դոցենտի պաշտոնով Գ. Ղափանցյան և դասատուի պաշտոնով Ա. Գասպարյան:

4. Նախագահի առաջարկությամբ անհրաժեշտ համարվեց, որ Երևանում հաստատությունների ու հիմնարկների մեջ, ինչպես և մասնավոր անձերի մոտ գտնված այնպիսի գրքեր, որ հարկավոր են ֆակուլտետիս, հավաքվեն՝ գնման, նվիրաբերության կամ այլ միջոցներով: Դրա համար ընտրվեց մի հանձնախումբ անդամությամբ Ա. Լոռու-Մելիք Քալանթարի, Գ. Ղափանցյանի, Գասպարյանի և Ֆրանգյանի, որոնք պետք է տեղեկություններ հավաքեն, թե որտեղ կան գրադարաններ կամ գրքեր, որ կարելի է ձեռք բերել ֆակուլտետիս համար: Որոշվեց հարկ եղած դպքում նաև Հ<անրային> կրթթ<ության> և Ար<վեստի> մինիստրությանը դիմել այդպիսի գրքեր ձեռք բերելու համար:

5. Տեր-Մինասյանի զեկուցումից խնդրագրիների մասին՝ երևան եկավ, որ ֆակուլտետիս ուսանող լինելու խնդրամատուցց եղել են ընդամենը 88 հոգի⁴ զանազան դպրոցներում սովորածներ, զանազան տեսակի վկայագրերով կամ վկայականներով, մասամբ և առանց վկայագիր կամ վկայական ներկայացնելու: Որոշվեց՝ ա) իսկական ուսանող ընդունել այն բոլոր խնդրատուներին, որոնք ավարտել են որևէ միջնակարգ դպրոց և ներկայացրել են ավարտման վկայագիրը, բ) ժամանակավորապես ազատ ունկընդիր ընդունել այն բոլոր խնդրատուներին, որոնք իրենց խնդրագրերի մեջ հայտնել են, թե ա-

վարտել են որևէ միջնակարգ դպրոց, բայց վկայագիր ներկայացնել չեն կարողացել որևէ պատճառով, այսպիսիներին իսկական ուսանող համարել այն ժամանակ միայն, երբ կներկայացնեն իրենց ավարտման վկայագիրը, և նրանց ուսանողութունը այդ դեպքում հաշվել ազատ ունկընդրության զրբվելու օրից, գ) ազատ ունկընդիր ընդունել այն ամենքին, որոնք ըստ իրենց ներկայացրած վկայականների՝ միջնակարգ դպրոց չեն ավարտել, և դ) ազատ ունկընդիր ընդունել այն բոլոր խնդրատուներին, որոնք ներկայացրել են ներքևում դրված դպրոցների վկայականներ, մինչև որ ֆակուլտետս տեղեկություններ հավաքելով ստուգե, թե ինչ տիպի դպրոցներ են դրանք՝ Վանի Բարեգործական ընկերության վարժապետանոց, Վանի Ամերիկյան միջնակարգ դպրոց, Վանի Երամյան դպրոց, Վանի Սանդիստյան միջնակարգ դպրոց, Վանի Հայկազյան դպրոց, Վանի Մանչերու ամերիկյան բարձր վարժարան, Սամսոնի ութամյա միջնակարգ վարժարան, Աղթամարի Թեմական դպրոց, Սեբաստիո Արամյան ութամյա դպրոց և Մարզվանի Ամերիկյան աղջկանց զրպրոց:

Խորհրդակցության միջոցին երևան եկավ, որ միջնակարգ դպրոցներ են հետևյալները՝ տղայոց գիմնազիաները, օրիորդաց գիմնազիաները, աղջկանանց դպրոցների 7-րդ դասարանները, եթե 8-րդ դասարանը մասինագիտական է, թեմական դպրոցները, էջմիածնի ճեմարանի դպրոցը, Թիֆլիսի Հովնանյան և Գայանյան դպրոցները, Երևանի Գայանյան դպրոցը, Բաքվի Հոնիֆսիմյան դպրոցը, Ալեքսանդրապոլի Արղուսյան դպրոցը, Թավրիզի Կեդրոնական դպրոցը, Թիֆլիսի «Մասնավոր ուսուցիչների ընկերության» գիմնազիան և Թիֆլիսի Պալմովի մասնավոր գիմնազիան:

6. Որոշվեց ուսումն սկսել հոկտեմբերի 25-ին, բայց նախքան այդ մասին հայտարարությունը՝ հարցնել համալսարանի կազմակերպիչ Դ. Զավրյանին⁵, թե արդյոք կարող է նա լսարաններ և լույս տրամադրել դրա համար:

7. Ս. Տիգրայանն առաջարկեց որոշում ընդունել դիմելու Հ<անրային> կրթ<ության> և Ար<վեստների> մինիստրությանը, որ մի քանի հիմնական, անհրաժեշտ ժամանակավոր կանոններ հաստատել տա, որոնցով ղեկավարվի համալսարանը մինչև կանոնադրության կազմելն ու հաստատելը: Այս մասին խորհրդակցելու ժամանակ Ե. Տեր-Մինասյանը, համաձայնելով, որ նույն դիմումը լինի Հ<անրային> կրթ<ության> և Ար<վեստի> մինիստրությանը, առաջարկեց, որ փոխանակ նոր կանոնների՝ ղեկտոր Ղամբարյանի ներկայացրած հրահանգները հաստատել, <որ դրանք> տրվեն ի ժամանակավոր ղեկավարություն, իսկ Ռ. Աբրահամյանն առաջարկեց, որ համալսարանը ժամանակավորապես ղեկավարվի Իգնատիևի կանոնադրության նախագծով⁶, ինչպես որ հանձնարարել է համալսարանի ղեկտորը: Քվեարկության ժամանակ ձայների մեծամասնություն ստացավ առաջին առաջարկը, որ և որոշվեց դնել համալսարանի խորհրդի քննությանը:

Նախագահ՝ Հ. Մանանդյան

Անդամներ՝ Ս. Տիգրայան, Ա. Գասպարյան, Ե. Տեր-Մինասյան,

Ա. Լոռու-Մելիք Քալանթար, Ռ. Աբրահամյան

Արձանագրող՝ Մ. Աբեղյան

Վավ. № 92դ, թ. 5—6: Բնագիր:

1. Ս. Ռ. Աբեղյան (1865—1944) — գրականագետ, լեզվաբան, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս: Սովորել է Ենայի, Լալայգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում: Եղել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի ղեկավար:

2. Ա. Ա. Լոռու-Մելիք Քալանթար (1884—1942) — հնագետ, պատմաբան: Ավարտել է

Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: Եղել է Երևանի պետական համալսարանի հիմնադիր դասախոսներից:

3. Տե՛ս № 1 փաստաթուղթը:

4. Հ. Մանանդյանի թղթերում պահպանվել է Հայաստանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների ցանկը, ըստ որի ֆակուլտետն ունեցել է 99 ուսանող: Արանցից հիամասնագրված են ուսանող 72-ը, ունկնդիր են ընդունվել (մինչև վկայագիր ներկայացնելը) 9-ը և սովորական ունկնդիր ևս՝ 9-ը (տե՛ս թղթ. 222, վավ. 92գ, թ. 8ա, 9; հմտ. նույն տեղում, վավ. 92դ, թ. 40):

5. **Պ. Զ. Զավրյան (Զավրիև)** — քիմիկոս, Հայաստանի համալսարանի կազմակերպիչներից, պրոֆեսոր: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի քիմիական ֆակուլտետը: Եղել է Պետերբուրգի Ցանապարհաշինական ինստիտուտի քիմիական լաբորատորիայի վարիչ, նույն ինստիտուտի պրոֆեսոր: Հետագայում Երևանի ժողովրդական համալսարանի ռեկտոր (1921—1922), տեխնիկական (բնագիտական) ֆակուլտետի ղեկավար:

6. **Պ. Ն. Իզնասուկ (1870—1926)** — ցարական Ռուսաստանի լուսավորության մինիստր (1915—1916): Ելնելով Երկրի բուրժուական զարգացման հեռանկարներից՝ ծրագրել էր անցկացնել դպրոցական և բուհական ռեֆորմներ և այդ կապակցությամբ կազմել նախագծեր, այդ թվում և համալսարանական կանոններ:

№ 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆԻՍՏԻ 20 ՀՈԿՏ <ՆՄԲԵՐԻ> 1920 Թ.

Նախագահում էր դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյան,
Ներկա էին Ս. Տիգրանյան, Ա. Գասպարյան, Ծ. Տեր-Մինասյան, Ա. Լոու-Մելիք Քալանթար, Ծր. Ֆրանգյան, Մ. Աբեղյան,
Արձանագրում էր Ռ. Աբրահամյան:

1. Քննության տրվեց առաջիկա սեմեստրում դասախոսվելիք առարկաների ցուցակը: Ներկա եղող ուսուցչապետներից Մ. Աբեղյանը հայտնեց, որ ինքը մտադիր է դասախոսել առաջիկա սեմեստրում Հայ ժողովրդական վեպը, Ծ. Ֆրանգյանը — փիլիսոփայության պատմություն (հին շրջան), Ա. Լոու-Մելիք Քալանթարը — 1) Արևելքի պատմություն և 2) Հնագիտության համառոտ դասընթաց, Ռ. Աբրահամյանը — Հայկական և ընդհանուր հնչյունաբանություն, Ծ. Տեր-Մինասյանը — Եկեղեցական պատմության ընդհանուր՝ հին շրջանը, մինչև Հայոց եկեղեցու սկզբնավորությունը և 2) Հայոց պատմության հին շրջանը, Ա. Գասպարյանը — Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, Ս. Տիգրանյանը — Հոգեբանություն (3 ժամով), Հ. Մանանդյանը — Հայոց պատմության թուրք-թատարական շրջանը: Գարեգին եպիսկոպոսի¹, Մեսրոպ եպիսկոպոսի, Ս. Մալխասյանի², Գ. Ղափանցյանի, *, Սիմոնյանի³ և լեզուների ուսուցիչների բացակայության պատճառով նրանց դասախոսելիք կուրսերը այժմ վերջնականապես պարզ չեն: Ֆակուլտետի համար, սակայն, պարզվեց, որ առաջիկա սեմեստրին կարող են կրկնվել մի քանի առարկաներ նախորդ սեմեստրում (Ալեքսանդրապոլում) դասախոսածներից, բայց և կկարդացվի մի շարք նոր դասընթացներ և բավարարված կլինեն ինչպես նոր, այնպես և հին ուսանողները:

2. Սեմեստրի տևողությունը առաջիկա ճամբարանական տարվա համար սահմանվեց հետևյալ ձևով.

առաջին սեմեստր՝ նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար

երկրորդ սեմեստր՝ մարտ, ապրիլ, մայիս:

Փետրվարին կլինի ընդմիջում, իսկ տոները կսահմանափակվին՝ ծննդյան երեք օրով, դատկվա՝ վեց օրով:

* Սի ազգանուն անընթեռնելի է:

3. Դասախոսությունների ժամանակը—որոշվեց դասախոսություններն սկսել ճաշից հետո ժամի 5-ից մինչև 9-ը:

Նախագահ՝ Հ. Մանանդյան

Անդամներ՝ Ս. Տիգրանյան, Ա. Գասպարյան, Ե. Տեր-Մինասյան, Ա. Լոռու-Մելիք Քալանթար, Ծր. Ֆրանգյան, Մ. Աբեղյան

Անդամ քարտուղար՝ Ռ. Աբրահամյան

Վավ. № 926, թ. 7: Բնագիր:

1. Գարեգին եպիսկոպոս— նկատի ունի նշանավոր հայագետ, մանկավարժ, եկեղեցական գործիչ Գ. Կ. Հովսեփյանցին (1867—1952): Սովորել է Բեռլինի, Հալեի և Լայպցիգի համալսարաններում, փիլիսոփայության դոկտոր: Հետագայում՝ Գարեգին Ա կաթողիկոս Աեծի Տանն Կիլիկիո:

2. Ս. Ա. Մալխասյանց (1857—1947)— բանասեր, լեզվաբան, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս: Սովորել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում: Երևանի համալսարանի հիմնադիր դասախոսներից:

3. Սեզ հաջողվեց պարզել, որ խոսքը ընդհանուր պատմության դասատու օրիորդ Աիմոնյանի մասին է (տե՛ս ՀՍՍՀ ՊՊԿԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, ց. 2, գ. № 1159, էջ 3):

№ 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ, 24 ՀՈԿՏ<ՆՄԲԵՐԻ> 1920 Թ.

Նախագահում էր դեկանի պաշտոնակատար պարոն Հ. Մանանդյան, ներկա էին Մեսրոպ Եպիսկոպոս, պ. պ. Աբեղյան Մ., Աբրահամյան Ռ., Լոռու-Մելիք Քալանթար Ա., Տեր-Մինասյան Ե. Տիգրանյան Ս., Գասպարյան Ա.:

Արձանագրում էր Ա. Գասպարյան:

Որոշվեց ընդունել Ատրպատականի Կեդրոնական դպրոցի դասընթացավարա Ղարիբյան Հրանտին իբրև ազատ ուսանող մինչև իր ավարտման վրկայագրի ներկայացնելը: Հովնանյան օր<իորդաց> դպրոցի 7-րդ դասարանն ավարտած օրիորդ Գրիգորյան Վարդանուշը ընդունվեց իբրև ազատ ունկընդրուհի:

Հանձնարարվեց սլարոն Ե. Տեր-Մինասյանին կազմել պատմա-լեզվաբանական ֆակուլտետի նախահաշիվը և ներկայացնել ֆակուլտետին ի հավանություն:

Պատմա-լեզվաբանական ֆակուլտետի դասախոսությունների սկսվելու օրը նշանակելը զանազան պատճառներով հետաձգվեց:

Ժողովը հավանություն տվեց պ. Գասպարյանի ցանկության՝ դասախոսել առաջիկա սեմեստրին նաև պատմագիտական ուղղությունների մասին (1 ժամով): Մեսրոպ եպիսկոպոսը հայտնեց, որ սույն սեմեստրին կրկնելու է Հայոց հին գրականության պատմությունը:

Դասախոսությունների ժամերի որոշման ժամանակ պ. Մ. Աբեղյանը հայտնեց, որ ինքը դասախոսելու է շաբաթական երկու ժամով՝ Հայ ժողովրդական վեպը, պ. Ռ. Աբրահամյան երկու ժամով՝ Հայկական և ընդհանուր հնչյունաբանություն, պ. Լոռու-Մելիք Քալանթար 3 ժամով՝ Արևելքի պատմություն և 1 ժամով՝ Հնագիտության համառոտ դասընթացը, պ. Ե. Տեր-Մինասյան 3 ժամով՝ Հայոց պատմություն (հին շրջան), պ. Գասպարյան 3 ժա-

մով՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և 1 ժամով՝ Պատմագիտական ուղղությունները, պ. Ս. Տիգրանյան 3 ժամով՝ Հոգեբանություն, պ. Հ. Մանանդյան 3 ժամով՝ Հայոց պատմության թուրք-թատարական շրջանը, Մեսրոպ եպիսկոպոսը 2 ժամով՝ Հայոց հին գրականության պատմությունը: Բացակա եղող դասախոսների ժամերի քանակը առայժմ անորոշ մնաց:

Ցանկալի համարվեց ի նկատի առնել, որ դասացուցակը կազմելու ժամանակ հարակից գիտությունները միմյանց հաջորդեն: Պրն. Ռ. Աբրահամյանն առաջարկում է ուսուցվելիք առարկաները բաժանել երեք մասի՝ լեզվական, գրական և պատմական և ապա միայն դասացուցակ կազմել, քանի որ վերոհիշյալ բաժանումը անպայման կազդե դասացուցակի կազմելու վրա: Պարոն Մ. Աբեղյանը ընդունելով հանդերձ, որ մենք այժմ գիտությունների խիստ բաժանում չենք կարող կատարել, քանի որ մենք չունենք համապատասխան ուժեր, առաջարկում է իբրև հիմք ընդունել Հայոց գրականությունը, լեզուն և պատմությունը և որոնց կցել օժանդակ գիտությունները: Պարոն Հ. Մանանդյանն առաջարկում է դասախոսությունները երկու մասի բաժանել և երկու բաժիններով բավականանալ՝ լեզվագիտական և պատմագրական, որովհետև նախ պատմությունն ու մատենագրությունը միմյանց անհրաժեշտորեն լրացնող գիտություններ են և ապա մեր առկա ուժերը չեն թուլատրում խիստ մասնագիտական բաժանում կատարել: Ժողովը որոշեց առարկաների բաժանման խնդիրը հետևյալ նիստին ևս խորհրդածության նյութ դարձնել...

Նախագահ՝ Հ. Մանանդյան

Անդամներ՝ Ս. Տիգրանյան, Մ. Աբեղյան, Ծ. Տեր-Մինասյան

Անդամ-քարտուղար՝ Ա. Գասպարյան

Վավ. № 92է, թ. 10: Բնագիր:

№ 5

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5 (Ե)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 1920 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ

Նախագահում է դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյան, արձանագրում է՝ Ծ. Տեր-Մինասյան, ներկա են անդամներ՝ Ա. Գասպարյան, Ս. Տիգրանյան, Մ. Աբեղյան, Ծ. Ֆրանգյան և Ռ. Աբրահամյան: Ժողովը բացվում է երեկոյան > ժամը 5-ին:

Ա. Նախ կարդացվում և վավերացվում է նախորդ նիստի արձանագրությունը:

Բ. Պրիվատ դոցենտ Ծ. Ֆրանգյան հայտնում է, որ առաջիկա սեմեստրում ինքը կարդալու է Հին փիլիսոփայության պատմություն շաբաթական 3 ժամով (երեք ժամով):

Գ. Կարդացվում է Երևանի Արևմտահայ ուսուցչական միություն վարչության 25 հոկտեմբերի 1920 թ. № 45 գրությունը, որով հայտնում են, թե Տաճկաստանում գոյություն ունեցող միջնակարգ իմաստով դպրոցները հետևյալներն են՝ 1. Պոլսո Կեդրոնական վարժարանը, 2. Վանի Կեդրոնական վարժարանը մինչև 1910—1911 թթ., 3. Վանի Երամյան վարժարանը, 4. Վանի Ամերիկյան օրոնորդաց վարժարանը, 5. Վանի Ամերիկյան տրդայոց վարժարանը, 6. Վանի Սանդիստյան դպրոցը մինչև 1911 թ., 7. Վանի Վարժապետանոցը, 8. Աղթամարի թեմական դպրոցը մինչև 1910 թ., 9. Կարնո և Սեբաստիո Սանասարյանները, 10. Մարզվանի կոլեջը, 11. Այնթապի կո-

լեջը: Ինչ վերաբերում է Սեբաստիո Արամյան և Սամսոնի ութամյա դպրոց-ներին, հայտնում են, որ իրենց որոշակի հայտնի չէ այդ դպրոցների միջնակարգ հանգամանքը:

Մտքերի փոխականությունից հետո, ժողովը որոշում է վերոհիշված դպրոցներից ավարտման վկայական ներկայացնողներին ընդունել իսկական ուսանող և այս վճիռը տանել ի հաստատություն <համալսարանի> խորհրդի, իսկ Սեբաստիո Արամյան և Սամսոնի ութամյա դպրոցավարտներին ընդունել կողմնակի ունկընդիր, մինչև որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանից ստացվեն տեղեկություններ այդ դպրոցների մասին: Պատրիարքարան դիմումն անելն հանձնարարել ֆակուլտետի պ. դեկանին:

Դ. Խնդրատու Ստամբուլցյան Եղիսաբեթ ընդունվում է ուսանողուհի:

Ե. Հարց եղավ ֆակուլտետի զբաղմունքներն սկսելու մասին. որոշվեց հանձնարարել ֆակուլտետի վարչությանը պարապմունքները սկսել՝ նախօրոք տեղեկացնելով այդ մասին՝ առաջին իսկ հնարավորության դեպքում:

Զ. Ե. Տեր-Մինասյանը զեկուցում է ֆակուլտետի հանձնարարությամբ իր կազմած նախահաշիվը 1921 թ. համար: Նախահաշիվը ունի հետևյալ պատկերը.

ա. Անձնական կազմը՝ 6 պրոֆեսոր, 10 դոցենտ, 8 պրիվատ դոցենտ և ուսուցիչ՝, որոնց վարձատրության համար պահանջվում է ֆակուլտետի դեկանի և քարտուղարի ռոճիկի հետ միասին՝ ամբողջ տարվա համար, տասն միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար ռուբլի (10.236.000 ռ.):

բ. Համալսարանի գրադարանի համար պատմա-լեզվաբանական բովանդակությամբ գրքեր գնելու և կազմելու համար անհրաժեշտ է հատկացնել հինգ միլիոն ռուբլի (5.000.000):

գ. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել դասախոսությունների հրատարակման, ինչպես և պարբերական գիտական հանդեսի ու գիտական մոնոգրաֆիկ աշխատանքների տպագրության վրա: Այդ նպատակն իրագործելու համար պետք են հետևյալ ծախքերը՝

1. 360 մամուլի (որից 300-ը դասախոսություններ, 30-ը պարբերական հանդես և 30-ը գիտական մոնոգրաֆիաներ)

չարվածք և տպագրություն, մամուլին 15.000 ռ. — 5.400.000 ռուբլի.

2. Թուղթ 240 օգմա, օգման 15.000 ռ. — 3.600.000 ռ.

3. Բրոշյուրովկա, երեսի թուղթ և տրագրություններ — 1.250.000 ռ.

4. Հոնորար 30 մամուլ պարբերականի, մամուլին՝ 32.000 ռ. — 960.000

5. Հոնորար 300 մամուլ դասախոսությունների, մամուլին՝ 20.000 ռ. — 6.000.000

6. Սրբագրություն 360 մամուլի, մամուլը 5.000 ռ. — 1.800.000

7. Խմբագրություն և վերահսկողություն — 600.000

Ընդամենը այս հոդվածով ծախք է պահանջում տասնևինն միլիոն վեց հարյուր տասը հազար ռուբլի (19.610.000):

Գները նշանակված են 1920 թ. նոյեմբերի 1-ի հաշվով, որոնք ապագայում բնականաբար պետք է փոփոխության ենթարկվեն շուկայի գների բարձրանալու կամ ընկնելու համեմատությամբ:

Տպագրված գրքերի կեսը տրվում է հեղինակներին, իսկ կեսը մնում է համալսարանին: Գիտական մոնոգրաֆիաների համար հոնորար չի վճարվում: Դասախոսությունները պետք է տպագրվեն 600-ական օրինակ, իսկ մոնոգրաֆիաները՝ 500-ական:

դ. Պաշտոնյաններին հիվանդության և այլ կարևոր դեպքերում նպաստներ տալու համար պետք է հատկացնել մի միլիոն ռուբլի (1.000.000 ռ.):

ե. Այլ և այլ ծախքեր (կոմանդիրովկա և այլն) մի միլիոն ուրբի (1.000.000 ու.):

Պատմա-լեզվաբանական ֆակուլտետի նախահաշվի ընդհանուր զումարն է երեսունվեց միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար ուրբի (36.846.000 ու.), որի մեջ չեն մտնում իհարկե ընդհանուր համալսարանական ծախքերը:

Այս նախահաշիվն ընդունվում է և հանձնարարվում ֆակուլտետի անդամ Ե. Տեր-Մինասյանին նույնը տանել տնտեսական խորհուրդ, որի քննությունից հետո ներկայացնել համալսարանի խորհրդի հաստատության.

Ժողովը փակվում է երեկ <ոյան> ժամը 7-ին:

Նախագահ ժողովի՝ Հ. Մանանդյան

Անդամներ՝ Մ. Աբեղյան, Ռ. Աբրահամյան, Ե. Ֆրանգյան,

Ս. Տիգրանյան, Ա. Գասպարյան

Արձանագրող անդամ՝ Ե. Տեր-Մինասյան

Վավ. № 92ը, թ. 11: Բնագիր:

1. Համեմատության կարգով նշենք, որ 1920 թ. փետրվարին ֆակուլտետում դասախոսում էին 2 պրոֆեսոր, 3 դոցենտ, դոցենտի 2 պաշտոնակատար, 1 պրիվատ դոցենտ և 2 դասատու, ընդամենը՝ 10 հոգի (տե՛ս ՀԽՍՀ ՊՊԿԱ, ԱՄՆԱԻՆ Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, ց. 2, գ. № 1159, էջ 3):

№ 6

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
6-ՐԳ ՆԻՍԸ

Նախագահում էր ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար պ. Հ. Մանանդյանը, իսկ արձանագրում էր Ե. Ֆրանգյանը:

Ներկա էին Ս. Տիգրանյան, Մ. Աբեղյան, Ռ. Աբրահամյան, Աշ. Լոռու-Մելիք Քալանթար, Ե. Տեր-Մինասյան և Ա. Գասպարյան:

Օրակարգն էր՝

1. Ֆակուլտետի բացման հարց,

2. Նոր խնդրատունների ընդունելության հարց:

Ս. Տիգրանյանը առաջարկում է մի շաբաթով հետաձգել ֆակուլտետի բացումը՝ նկատի ունենալով ներկա լուրջ դրությունը ուղղմանակատում:

Կարծիքների կարճ փոխականությունից հետո, ձայների մեծամասնությամբ որոշվեց մնալ նախկին վիճակին, այսինքն՝ թողնել ֆակուլտետի վարչության հայտարարելու ֆակուլտետի աշխատանքների սկզբի մասին, երբ այդ հարավոր կգտնի:

Սրանից հետո ժողովն անցավ նոր խնդրատունների ընդունելության և կայացրեց հետևյալ որոշումները՝

1. Հարգեց օր. Թամարա Անանյանի խնդիրը և ընդունեց որպես կողմնակի ունկընդիր,

2. Եղիշե Ասլանյանը, թեմականավարտ, ընդունվեց որպես ուսանող,

3. Սեդրակ Բուդաղյանը, Բաքվի տեխնիկական դպրոցն ավարտած, ընդունվեց որպես կողմնակի ունկընդիր, մինչև այդ դպրոցի ծրագրի պարզելը,

4. Մկրտիչ Ստեփանյան, թեմականավարտ, ընդունել որպես ուսանող և պահանջել դոկումենտները,

5. Արևմտահայ խնդրատուներին նրանք, ովքեր ներկայացրել են միայն մասնավոր մարդկանց կողմից վկայություններ, ընդունվում են առայժմ որպես կողմնակի ունկրնդիրներ, մինչև որ ներկայացնեն Արևմտահայ ուսուցչական միության վարչության պաշտոնական վկայությունը²:

Նախագահ՝ Հ. Մանանդյան
Քարտուղար՝ Ծ. Ֆրանգյան
Անդամներ՝ Ծ. Տեր-Մինասյան, Մ. Աբեղյան,
Խ. Աբրահամյան, Ա. Գասպարյան

Վավ. № 92թ., թ. 12: Բնագիր:

1. Խոսքը 1920 թ. սեպտեմբերի 22-ին սկսված թուրք-հայկական պատերազմի մասին է որի հետևանքով Հայաստանի Հանրապետությունն ունեցավ տարածքային զգալի կորուստներ սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը, հոկտեմբերի 30-ին Կարսը:

2. Ինչպես ակներև է № 6 փաստաթղթից, Արևմտահայ ուսուցչական միությունն է տնօրինում ջարդերից մազապուրծ արևմտահայ երիտասարդների համալսարանական ուսուցանողական հարցը:

№ 7

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

Հայաստանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի այն խիստը տեղի ունեցավ սույն 1920 թ. նոյ<եմբերի> 9-ին նախագահությունից դեկանի պաշտոնակատար պարոն Մանանդյանի, քարտուղարությամբ Գ. Ղափանցյանի և ներկայությամբ հետևյալ անդամների՝ պ. պ. Աբեղյան, Աբրահամյան, Գասպարյան, Լոռու-Մելիք Քալանթար, Ծ. Տեր-Մինասյան, Ծ. Ֆրանգյան:

Բանալով ֆակուլտետի խիստը, պարոն նախագահը առաջարկում է ժողովին նախ զբաղվել այն ուսանողների ընդունելության խնդրով, որոնց մասին դեռ որոշում չէր եղել կայացած: Խնդրատուներ տասն հոգի են, այն է Բալասան Շահնաբաթյան, Հայկ Մնացականյան, Գուրգեն Գևորգյան, Մատթեոս Ավետիսյան, Վասիլ Իսահակյան, Կարապետ Ալլահվերդյան, Աշոտ Մելիք-Խանգեղյան, Մարիամ Շարաֆյան, Հայկ Խ. Լեոնյան և Հայկ Աջեմյան Ֆակուլտետը որոշում է դրանց մասին հետևյալը. ընդունել առաջին վեցի՝ իբրև իսկական ուսանողներ, այն է՝ Բ. Շահնաբաթյանին, Հ. Մնացականյանին, Գ. Գևորգյանին, Մ. Ավետիսյանին, Վասիլ Իսահակյանին և Կ. Ալլահվերդյանին, պահանջելով վերջին երեքից վկայականներ (Մ. Ավետիսյանից և Կ. Իսահակյանից և Կ. Ալլահվերդյանից), իսկ մնացող չորս խնդրատուներին Ա. Մելիք-Խանգեղյանին, Հ. Խան-Լեոնյանին և Հ. Աջեմյանին որոշվում ընդունել իբրև ազատ ունկրնդիրներ, պահանջելով, որ վերջին երկուսը՝ Հայ Խան-Լեոնյանը և Հայկ Աջեմյանը ներկայացնեն Արևմտահայ ուսուցչական միության կողմից պատշաճ վկայականներ:

Այնուհետև պարոն նախագահը հայտնում է, որ ստացված են Հանրային կրթության և Արվեստի նախարարությունից պաշտոնական գրություններ Գր. Ղափանցյանի և Ա. Գասպարյանի նշանակման մասին, որով Գ. Ղափանցյանը նշանակվում է 1920 թ. օգոստոսի 1-ից պրիվատ դոցենտ հայագիտական ամբիոնին կից լեզվաբանական մասի համար, իսկ Ա. Գասպարյանը դասատու ընդհանուր պատմությունից նույն օգ<ոստոսի> 1-ից:

Վերջում պարոն նախագահի առաջարկությամբ ֆակուլտետը գրադվում է այն անձանց խնդրագրերի քննութայամբ, որոնք այդ գրավոր դիմումով ցանկութուն են հայտնել մտնել պատմա-լեզվաբանական ֆակուլտետի դասատրվական կոլեգիայի մեջ. այդ անձնավորութուններն են՝ պ. պ. Խոստիկյան, Նիկկելս, Բասմաջյան և Ֆրանգյան: Որոշվեց հետևյալը. 1) պարոն Խոստիկյանի մասին հարցը թողնել առկախ, քանի որ նրա գրավոր խնդիրը չի ստացված ֆակուլտետում՝, 2) պարոն Նիկկելսից պահանջել նրա դիպլոմը², 3) պարոն Բասմաջյանի խնդիրը Բեռագիտութայան դասախոսի պաշտոնի համար³ առայժմ հետաձգել, մինչև ֆակուլտետի ժրագրի որոշումը, և 4) պարոն Ֆրանգյանի խնդիրը քննութայան շառնել, որովհետև ռեկտորը առանց ֆակուլտետի կարծիքը ստանալու արդեն նշանակել է⁴, սրա մասին հայտնվում է ռեկտորին ի գիտութուն:

Նախագահ՝ Զ. Մանանդյան

Անդամներ՝ Ե. Տեր-Մինասյան, Մ. Աբեղյան, Ռ. Աբրահամյան, Գասպարյան, Ե. Ֆրանգյան, Լոու-Մելիք Քաւան-Թար

Քարտուղար՝ Գ. Ղափանցյան

Վալ. № 92ժ, թ. 13: Բնագիր:

1. Ինչ-ինչ պատճառներով Մ. Խոստիկյանի նախորդ դիմումը (տե՛ս № 1, Ծան. 18) չի պահպանվել ֆակուլտետի դիվանում և չի դարձել քննարկման առարկա: Հետևաբար նույնների 26-ին նա նոր խնդրագիր է ներկայացրում՝

«Որովհետև իմ այդ խնդիրը ինձ անհայտ պատճառով երևան չի եկել և քննութայան չի տրվել, ուստի այսու կրկնում եմ նույնը արգո ռեկանիտ միջոցով և մնում եմ Ձեզ հարգող՝

դոկտոր Խոստիկյան

Քրիտափորդի փողոց, № 42» (տե՛ս Մանանդյանի ֆոտո, թղթ. 222, վալ. 93ժգ, թ. 17):

2. Ե. Նիկկելսի դիպլոմը Խարկովի համալսարանն ավարտելու վերաբերյալ տե՛ս նույն տեղում (վալ. № 93ժը, թ. 24):

3. Կ. Ը. Բասմաջյանի սույն ուղերձն առ «Հայաստանի Հանրապետութայան Հանրային կրթութայան պարոն նախարարին» ևս պահպանվել է: Խնդրատուն այստեղ հատկապես շեշտում է, թե սեպագրագիտութայան ասպրեզում իր կատարած աշխատանքները բարձր են գնահատվել Սորբոնի և Լուվրի մասնագետների կողմից և այժմ ինքը ցանկանում է աշխատել Հայաստանի համալսարանում՝ «Կը խնդրեմ պարոն նախարար, որ հաճեիք ըսել, թե կրնաի՞ք Հայկական համալսարանի մեջ բեռագրութայան (այսինքն՝ սեպագրութայան—Պ. Ը.) ուսուցչութայան պաշտոնը տալ ինձ, և ի՞նչ պայմաններով» (տե՛ս նույն տեղում, վալ. 93իբ, թ. 28):

4. Իրականում Ե. Ֆրանգյանը համալսարանի դասախոս է նշանակվել ոչ թե ռեկտորի, այլ Հանրային կրթութայան և Արվեստի մինիստրի կարգադրութայամբ, որը փաստվում է Քեռնալովով՝

«ՀՐԱՄԱՆ № 136

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ

ՆԱՄԱՐԱՐԻ

20 օգոստոսի 1920 թ.

Փիլիսոփայութայան դոկտոր Երվանդ Ֆրանգյանը նշանակվում է Երևանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի փիլիսոփայութայան պատմութայան պրիվատ դոցենտ սույն թվի սեպտեմբերի 16-ից:

Հանրային կրթութայան և Արվեստի

նախարար՝ Գ. Ղազարյան

Իսկականի հետ ծիշտ է. գործավար՝ ստորագրութունը:

Սույն հրամանի հակառակ՝ դատարկ էջին արված է հետևյալ մակագրութունը՝ «Երեվանի համալսարանի վարչութայանը, ի գիտութուն» (թղթ. 222, վալ. № 93գ, թ. 9):

ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆԻՍԻԻ
30-Ն ՆՈՅՆԵՄԲԵՐԻ 1920 Թ.

Ներկա են դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյան, անդամներ՝ Մ. Ա. Բեդյան, Ե. Տեր-Մինասյան, Ե. Ֆրանգյան, Ա. Գասպարյան, Գր. Ղափանցյան, Ս. Տիգրանյան, Ա. Լոռու-Մելիք Քալանթար:

Դեկանի պաշտոնակատարը ներկայացնում է իր գրավոր զեկուցումը՝ հոկտեմբերի 18-ի (առաջին) նիստի արձանագրությանը կցելու համար¹: Զեկուցվում է ստացած հրաման № 136 Հանր-ային կրթության նախարարի 20 օգոստոսի Եր. Ֆրանգյանին փիլիսոփայության պատմության պրիվատ դոցենտ նշանակելու մասին սեպտեմբերի 16-ից²: Զեկուցում է Հր. Աճառյանի նամակը³ և որոշվում է դիմել Արտաքին գործ-ոց նախարարության նրան Երևան հասնելու ապահով միջոցներ ընձեռելու մասին: Զեկուցում է Մ. Պապովյանի խնդիրը՝ ասիստենտի կոչում իրեն տալու հունական պատմության և հունական հնագիտության ամբիոնի⁴: Վճռվում է հանձնարարել դեկանի պաշտոնակատարին ստանալ Մ. Պապովյանից դիպլոմը և տեղեկություններ իր գիտական աշխատանքների մասին: Զեկուցում է Գ. էդիլյանի՝ դիմումը մանկավարժական առարկաներ և էսթետիկա դասախոսելու մասին: Քննության է առնվում մանկավարժական առարկաների ամբիոն հիմնելու՝ ո՞ր ֆակուլտետին կապելու հարցը: Առաջարկում են երկու բանաձև, մեկը Ս. Տիգրանյանի՝ «Իմել համալսարանի խորհրդին, որ այժմյանից հիմնվի համալսարանում մանկավարժության ամբիոն, կապելով այն ժամանակավորապես պատմա-լեզվաբանական ֆակուլտետի հետ՝ մինչև որ ապագայում պարզվի և վերջնականապես մշակվի համալսարանի գիտական բաժանման ձևակերպումը»: Այս բանաձևը ստանում է երեք ձայն և մերժվում է: Մյուս բանաձևը, Ե. Տեր-Մինասյանինը՝ «Ընդունելով մանկավարժական առարկաների կարևորությունը մեր համալսարանում, այս սեմեստրին կազմել մանրամասն ծրագիր այդ առարկաների, նրանց ծավալի, ավանդվելու հաջորդականության մասին և ապա այս խնդիրը դնել համալսարանի խորհրդի վերջնական վճռին»՝ ստանում է 5 ձայն և ընդունվում⁵:

Ստացվում է և զեկուցվում պ. Զավրյանի նամակը, որ ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի որոշման համաձայն ինքը հետաձգում է <համալսարանի> խորհրդի նիստը, որ պետք է լիներ դեկտեմբերի 1-ին, <կամ> դեկտեմբերի 4-ին: <Պատմա-լեզվաբանական> ֆակուլտետը որոշում է բողոքել պարոն Զավրյանի այդ ապօրինի կարգադրության դեմ և <համալսարանի> խորհրդի նիստն անել նշանակված օրը՝ դեկտեմբերի 4-ին:

Նախագահեց՝ Հ. Մանանդյան

Անդամներ՝ Մ. Աբեդյան, Ե. Տեր-Մինասյան, Ա. Գասպարյան, Գ. Ղափանցյան, Ա. Լոռու-Մելիք Քալանթար, Ե. Ֆրանգյան, Ա. Գասպարյան

Արձանագրեց՝ Ս. Տիգրանյան

Վավ. № 92բ, թ. 3: Բնագիր:

1. Տե՛ս փաստաթուղթ № 1:

2. Տե՛ս № 8, ծն. 4:

3. Էր. Աճառյանի այդ նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությանը (18 հոկտեմբերի 1920 թ.), հրապարակել ենք մենք (տե՛ս Պ. Հ. Ընդհանրության, Երևանի համալսարանը նորահայտ փաստաթղթերի լուսի ներքո, «Գրական թերթ», 12 մայիսի 1989 թ.: Նամակի բնագիրը պահվում է Հ. Մանանդյանի ֆոնդում):

4. Մ. Ռ. Պապովյանն ավարտել է Խարկովի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը և Պետերբուրգի պետական մանկավարժական դասընթացները, եղել է Խարկովի համալսարանի դասախոս (Մ. Պապովյանի դիմումն առ «Երևանի համալսարանի լեզվա-պատմա-նաբանական ֆակուլտետի խորհրդին», տե՛ս նույն տեղում, վավ. 93ժԷ, թ. 22):

5. Գ. Մ. Էդիլյան (1885—1942) — հոգեբան, մանկավարժ: Սովորել է Ենայի, Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում, դասավանդել է Նեոսիսյան դպրոցում, հետագայում Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի ղեկավար:

6. Մանկավարժական առարկաների դասավանդման անհրաժեշտությունը հիմնավորող Գ. Էդիլյանի ընդարձակ զեկուցագիրը («Առաջարկ Հայկական համալսարանում մանկավարժական առարկաներ մտցնելու մասին»), տե՛ս նույն տեղում, թղթ. 222, վավ. № 93ժգ, թ. 20—21:

№ 9

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

ՊԱՏՄԱ-ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆԻՍՏԻ

5 ԴԵԿՏ <ԵՄԲԵՐԻ>, 1920 թ.

Ներկա են՝ դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյան, անդամներ՝ Մ. Աբեղյան, Ա. Գասպարյան, Ծ. Տեր-Մինասյան, Գ. Ղափանցյան, Ծ. Ֆրանգյան, Ռ. Աբրահամյան, Ա. Լոռու-Մելիք Քալանթար, Ս. Տիգրանյան:

Դեկ <անի> <պաշտոնակատար> Հ. Մանանդյանը զեկուցում է, որ դեկտեմբերի 3-ին № 183 գրուժյամբ դիմել է ռեկտորի պաշտոնակատար Գ. Զավրյանին, որ անհրաժեշտ համարելով դեկտ <եմբերի> 6-ին սկսել ուսումը մեր ֆակուլտետում, խնդրում է կարգադրել լսարանների պատրաստ լինելը տաքություն, լուսի և հարմարություն կողմից: Մինչև այժմ սակայն պ. Գ. Զավրյանից որոշ պատասխան չէ ստացված այդ դիմումին: Հանձնարարվում է դեկանի պաշտ <ոնակատարին> ներկայանալ նոր կոմիսարին հանրային կրթություն¹, զեկուցել դասախոսություններն սկսելու ֆակուլտետի որոշման մասին և խնդրել նրա աջակցությունը:

Հանձնարարվում է դեկանի պաշտ <ոնակատարին> կազմել ժամանակավոր դասացուցակ՝ ի նկատի առնելով, որ դասախոսությունները տևեն 40 րոպեից ոչ պակաս, վերջնան ժամը 8-ից ոչ ուշ, դասամիջոցները՝ 10 րոպեից ոչ պակաս, դասախոսությունները <պետք է> տեղի ունենան առայժմ մեկ լսարանում՝ տաքացնելու դժվարությունների պատճառով:

Հանձնարարվում է դեկանի պաշտ <ոնակատարին> խնդրել Հանրային կրթության կոմիսարին պրոֆեսոր Գարեգին եպիսկոպոսին գերությունից ազատելու համար հոգալու մասին²:

Դեկանի ընտրությունները հետաձգվում է միառժամանակ: Հ. Մանանդյանը խնդրում է ի նկատի ունենալ, որ ինքը հրաժարվում է թեկնածու լինելուց դեկանի պաշտոնի համար և որ մտածեն այլ թեկնածուների մասին:

Որոշվում է հրավիրել պ. Ծ. Նիկկելսին դասատու հունարենի այս սեմեստրի համար:

¹ «...ողացվում է պ. Մ. Խոստիկյանի գրությունը, որ ինքը խնդիր է տված եղել փիլիսոփայության պատմության դասատուի պաշտոնի համար, բայց մինչև այժմ պատասխան չէ ստացել: Կարողացվում է Հակոբ Հարությունյանի³ խնդիրքը⁴ փիլիսոփայական առարկաների դասախոսի պաշտոնի համար: Ս. Տիգրանյանն հայտնում է, որ Հ. Հարությունյանի գերմաներեն դոկտորական շարադր-

րանքը «Զարգացման գաղափարի փիլիսոփայական վերլուծությունը»⁵ ինքը ստացել էր հեղինակից և հունիսին հանձնել պրոֆ. Ղամբարյանին և խնդրել նրան որչափ հնարավոր է շուտով կարգադրությունը: Ֆակուլտետն ընդունում է, որ մեկ գիտական մասնաճյուղի համար կարող են հրավիրվել աշխատելու և դասախոսելու մի քանի հոգի, և հանձնարարում է դեկանի < աշտոնակատարին > և Ս. Տիգրանյանին քննել պ. Մ. Խոստիկյանի գիտական աշխատությունը, իսկ պ. պ. Ե. Տեր-Մինասյանին և Ս. Տիգրանյանին՝ պ. Հ. Հարությունյանի աշխատությունը և մինչև առաջիկա հունվարի 10-ը գրավոր զեկուցել ֆակուլտետին իրենց կարծիքը:

Նախագահեց՝ < Հ. Հ. Մանանդյան >:

Անդամներ՝ < Մ. Աբեղյան, Ա. Գասպարյան, Ե. Տեր-Մինասյան, Կ. Ղափանցյան, Ե. Ֆրանգյան, Ռ. Աբրահամյան, Ա. Լոռու-Մելիք Քալանթար >⁶

Արձանագրեց՝ Ս. Տիգրանյան

Վավ. № 92 գ, թ. 4: Բնագիր:

1. Խոսքը Ա. Գ. Հովհաննիսյանի մասին է:

2. Ավարկում է կարսի անկման ժամանակ (30 հոկտեմբերի 1920 թ.) թուրքերի կողմից պատմա-լեզվաբանական ֆակուլտետի հայ արվեստի պատմության պրոֆեսոր Գ. Հովհաննիսյանի գերվելու փաստը (այդ մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս թույն, Բեյրութ, 1982):

3. Հ. Պ. Հարությունյան (1889—1944) — փիլիսոփա, գրականագետ: Սովորել է Բեռլինի, Լայպցիգի և Ցյուրիխի համալսարաններում, հետագայում Երևանի պետական համալսարանի արևմտաեվրոպական լեզուների ամբիոնի վարիչ:

4. Փիլիսոփայության դոկտոր Հ. Հարությունյանի դիմումը տե՛ս Հ. Մանանդյանի ֆոնդ, թղթ. 222, վավ. 93ժբ, թ. 15—16:

5. Հ. Հարությունյանի գերմաներեն սույն աշխատությունը լույս է տեսել 1919 թ. Ցյուրիխում:

6. Նախագահի և անդամների ազգանուններն ու ստորագրությունները բացակայում են պրձանագրություններում, դրանք վերականգնել ենք ըստ նիստի մասնակիցների ազգանունների:

П. О. ОГАНЕСЯН—Материалы по истории Университета Армении.— В фонде академика А. Манандяна архивного отдела Матенадарана им. Маштоца хранится много документов, касающихся деятельности историко-языковедческого факультета Университета Армении в течение июля-декабря 1920 г. Публикуемые материалы свидетельствуют о том, что Университет Армении, несмотря на множество трудностей и препятствий, жил полнокровной жизнью. Был создан творческий преподавательский и учебно-вспомогательный коллектив, привлечен достаточный студенческий контингент, составлены программы преподаваемых предметов, определено количество отведенных им часов. Для университета было предоставлено здание, приобретены инвентарь, литература. Однако сложившаяся в республике тяжелая политическая обстановка не позволила университету приступить к регулярной деятельности. Публикуемые документы показывают, что Ереванский государственный университет является непосредственным преемником Университета Армении.